գիտական ժառանգության հրատարակման համար: Պատահական չեն Ս.Հարությունյանի գիտական գործունեության մասին Պարույր Սևակի սևեռուն միտքն ու գնահատականը. «Ս.Հարությունյանը գիտության մարդ է. ինչ վիճակում էլ լինի այդ գիտությունը, Ս.Հարությունյանն իր ուժերի լարումով զբաղվելու է գիտությամբ, Մանուկ Աբեղյանի գործը՝ կատարելով այն, ինչ թերի է մնացել»:[1]

Երկար տարիներ Ս.Հարությունյանի՝ որպես ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական նյութերի վավերագրման բաժնի վարիչի, գիտական ղեկավարմամբ, նորագույն մեթոդներով և հաշվողական տեխնիկայի կիրառությամբ մշակվել ու համակարգվել է ինստիտուտի բանահյուսական արխիվում կուտակված մեր հոգևոր ժառանգությունը, կազմվել է արխիվային նյութերի գլխավոր ցանկը, հրատարակվել են արխիվում պահպանվող շատ ու շատ նյութեր:

Մեծարգո հայագետը, որ նաև մեր հող ու ջրի ծնունդ է, եղել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծման ակունքներում՝ իր քննախույզ մտքով ու ոգով, հայականությամբ նպաստելով իր հայրենակից երիտասարդ գիտնականների հոգևոր վերընթացին, Կենտրոնի գիտական գործունեության ծավալմանն ու զարգացմանը:

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը շնորհավորում և արևշատություն է մաղթում մեծանուն գիտնականին՝ 90-ամյա հոբելյանի առթիվ, երախտագիտությամբ արժևորելով Գյումրիում 1997թ.-ին Կենտրոնի կայացմանը, այստեղ պարբերաբար անցկացվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովներին նրա առ այսօր գործուն մասնակցությունը, անգուգական գիտնականի ու հմայատիպար մարդու ջերմ, անաչառ աջակցությունը:

Կենտրոնի հանրույթի անունից՝

հ.գ.թ. Կ.Սահակյան

Ռ.Հովհաննիսյան

* * *

2018թ. համայն հայությունը մեծ ոգեշնչումով նշեց Հայաստանի Հանրապետության 100-ամյակը: Այս նվիրական տարեդարձը յուրովի նշեցին ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական կենտրոնի աշխատակիցները: Կենտրոնում բարի ավանդույթ է դարձել հայության բաղձալի տոները նշել Արևմտյան Հայաստանում՝ ուխտագնացությամբ և գիտական ընթերցումների անցկացմամբ:

2018թ. օգոստոսի 3-5-ը Կենտրոնը՝ «Համշեն տուրի» ուղեկցությամբ, երեք տասնյակ ուխտավորների հետ այցելեց Արևմտյան Հայաստան: Առաջին հանգրվանը հայոց տիեզերական մայրաքաղաք Անիում էր, որտեղ՝ Մայր տաճարում, կատարվեց հիշատակի խնկարկում՝ հոգևոր երգերի ուղեկցությամբ:



Այնուհետև ուխտավորները, շրջանցելով Արարատ լեռան ստորոտը, ճանապարհվեցին դեպի Բայազետ՝ պատմական Դարոյնք բերդավանը, որը IV դարում Մեծ Հայքի հայտնի բերդերից էր և Բագրատունի նախարարների ոստանը: Բայազետի հայ բնակչությունը հիմնականում զբաղվել է առևտրով, երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով, որոնք, հայտնի պատմական իրադարձությունների բերումով, 19-րդ դարի վերջում իրենց հանգրվանը գտան նաև Շիրակ աշխարհում՝ Ալեքսանդրապոլի համքարական համալիրում:

---

[1] *ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Բանահյուսության արխիվ, Ս.Հարությունյանի ֆոնդ:*

Առջևում Հայաստանի պատմական մայրաքաղաք Վանի բերդն էր, որը հայոց բնօրրանի ոգեշունչ զգացողությունների և ոգեշնչման առատ աղբյուր է: Այն այսօր ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցուցակում: Ուխտագնացության խորագրից բխում էր նաև հիշել ու խոնարհվել 1915 թ. ապրիլին Վանի հերոսական ինքնապաշտպանական կռիվների մասնակիցների հիշատակին,ինչն էլ տեղում դարձավ յուրահատուկ պատմագիտական բանավեճ-քննարկման թեմա:

Աղթամարի Սբ Խաչ և Վարագա Սբ Նշան եկեղեցիներում ուխտավորները հղեցին հիշատակի խնկաբույր աղոթքներ, որոնց հաջորդեց այցելությունը «Մհերի դուռ» կամ «Ագռավու քար» սրբազան քարաժայռ Վանա բերդի մոտ: «Հայու աշխարհը» չար ուժերից «ազատողին» խումբը մոտեցավ սրբազան դողով ու պայծառ գալիքի հանդեպ մեծ հույսով:

Ուխտագնացությունը շարունակվեց Մշո դաշտով, Բասենով, և ուխտավորները Սուլուխի ու Հովվի կամուրջներին սրբազան եռագույնը ծածանելու և ազգային ազատագրական երգեր հնչեցնելու բաղձալի պահեր ապրեցին: Ուխտագնացության բուն հանգրվանը Կարսն էր՝ Հին Հայոց Կարուց բերդը: Ավանդական հիշատակի արարողությունից հետո ներկաները վերհիշեցին հայոց վեհաշուք այս մայրաքաղաքի պատմության կարևորագույն էջերը: Օրվա խորհրդին համապատասխան՝ խոսվեց Կարսի մարզի մասին, որի մեջ մտան նաև Արդահանի,Կաղզվանի, Օլթիի շրջանները:Նշվեց, որ Ռուսաստանին միանալը դրական ազդեցություն ունեցավ Կարսի համար: Քաղաքն արագ բարգավաճեց ու շենացավ: Դա նկատելի էր հատկապես 1833-ից՝ երկաթուղու՝ Կարս մտնելուց հետո, որն աշխուժացրեց քաղաքի տնտեսական կյանքը: Սա նպաստեց նաև բնակիչների թվաքանակի ավելացմանն ու հայերի վերադարձին: Աշխուժացավ նաև մշակութային կյանքը:

Կարսի բերդի կամարների տակ էլ անցկացվեցին նախատեսված գիտական ընթերցումները: Հանդես եկան ՇՀՀ կենտրոնի գիտաշխատողներ՝ Ա.Ակոպովը /«Մահմեդականացած հայերի ինքնության խնդրի շուրջ»/, Հ.Հարությունյանը /«Տաղերի զարգացման նախադրյալները հայ միջնադարյան երաժշտության մեջ»: «Վասպուրականի ավանդական պարերը»/, Լ.Պետրոսյանը /«Երվանդունիների արքայատոհմը և վերջին արքան»/, Հ.Մատիկյանը /«Ավանդական օրորները Արևմտյան Հայաստանից»/:

Վերադառնալով Շիրակ՝ ՇՀՀ կենտրոնի աշխատակիցները մեծ ոգևորությամբ քննարկեցին հաջորդ ուխտագնացությունգիտական ընթերցումների թեմատիկ շրջանակը: